



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/38227-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Խ-065-12.10.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1240 - Ա որոշումը:

Հարգանքով՝

**ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Խ-065-12.10.2021-ՊԻ-011/0) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով առաջարկվում է՝

1) 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն՝ ուժը կորցրած ճանաչելով 137.1-ին հոդվածը.

2) 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասում կատարել փոփոխություն և հանել «137.1-ին հոդվածի 1-ին մասով» բառերը:

Այդ կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում (այսուհետ՝ օրենսգիրք) առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել 137.1-ին հոդվածը:

Քննարկվող հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը՝

«Հոդված 137.1. Ծանր վիրավորանքը

1. Անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայիոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը՝

պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգ հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կամ անձի վերաբերյալ ծանր վիրավորանք պարունակող նյութեր տարածելը, որը՝

1) կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով.

2) կատարվել է անձի հանրային գործունեությամբ պայմանավորված՝ պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ հարյուրապատիկից հազարապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է միևնույն անձի նկատմամբ պարբերաբար՝

պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեք հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

Սույն հոդվածում հանրային գործունեություն է համարվում անձի կողմից լրագրողական, հրապարակախոսական գործունեության, ծառայողական պարտականությունների կատարման, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ կապված վարքագիծը:»:

Որպես առաջարկվող փոփոխության հիմնավորում՝ նշված է այն, որ օրենսգրքի 137.1-ին հոդվածը լուրջ հակասություններ ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի հետ: Հոդվածում սահմանված կարգավորումները հանցակազմի նկարագրության և պատժաչափերի տեսանկյունից վկայում են այն մասին, որ օրենսդիրը չի հետապնդել Սահմանադրությամբ սահմանված որևէ նպատակ, այլ մտադրված է եղել քրեաիրավական միջոցների և ընթացակարգերի գործադրման սպառնալիքով սահմանափակել ազատ խոսքը, հրապարակային քննադատությունը, հատկապես հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, քաղաքական գործիչների նկատմամբ՝ ոչ իրավաչափ կերպով սահմանափակելով խոսքի ազատությունը:

Վերոգրյալի ուսումնասիրմամբ անհրաժեշտ է արձանագրել հետևյալը.

Նախ, հաշվի առնելով, որ քննարկվող հոդվածով նախատեսված հանցակազմն օրենսգրքում ներառվել է 2021 թվականի հուլիսի 30-ի լրացմամբ, այսինքն, շուրջ երեք ամիս առաջ, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հանցակազմի լրացման համար բերված հիմնավորումներին: Այդ հիմնավորումներում, ի թիվս այլնի, որպես քննարկվող հանցակազմն օրենսգրքում նախատեսելու պատճառաբանություն, նշվել է այն, որ հանցավորության վերաբերյալ տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բռնությամբ կատարված մեծ թվով հանցագործությունների պատճառը հենց տուժողի կողմից տրված վիրավորանքն է հանցավորին: Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շեշտակիորեն նվազել է հանրային իշխանության և հանրային գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ հարգանքը, նրանց հաճախ հայիոյում են հենց որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ հանրային գործունեություն իրականացնելու հետ կապված:

Բացի այդ, վկայակոչվել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 17-ի N ՍԴՈ-1606 որոշումը, որով սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը՝ «Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ վերլուծված՝ վարչապետի սահմանադրական կարգավիճակը և լիազորությունների ծավալը Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության պայմաններում, ինչպես նաև քաղաքական մեծամասնության ունեցած ազդեցությունը հանրային իշխանության մարմինների համակարգում, ընդգծում է նրանց կողմից գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը հայաստանյան քաղաքական խոսքում՝ ատելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքի և վարքագծի որևէ դրսևորում, ներառյալ նաև նախընտրական քարոզչության ժամանակ հնչեցվող խոսքում բացառելու նպատակով: Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից իրականացվող նախընտրական քարոզչությունն ուղղված է ընտրողների վստահությունը ձեռք բերելուն (ամրապնդելուն): Այդ գործընթացում առանցքային դեր պետք է կատարի տնտեսական, սոցիալական, պաշտպանական և այլ բնագավառներում քաղաքական ուժերի ծրագրային դրույթների մասին ընտրողների

իրագրելու և այդ դրույթների առարկայական քննարկումը՝ չբացատրելով նախընտրական քարոզչության ժամանակ սուր քննադատական խոսքը, որը, սակայն, չպետք է ուղեկցվի ատելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքով և վարքագծով:»:

Վերոգրյալի ուսումնասիրմամբ պետք է արձանագրել, որ օրենսգրքում քննարկվող հոդվածի լրացումն ունեցել է իրավաչափ նպատակ, այն է՝ վիրավորանքի բացառմանն ուղղված միջոցների ձեռնարկմամբ բացատրել նաև դրա հետևանքով կատարվող հանցագործությունները, այդ թվում՝ բռնության հետ զուգորդված: Բացի այդ, օրենսդիրն առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի վերոնշյալ եզրահանգմամբ և գործուն միջոց ձեռնարկել հայաստանյան հասարակության մեջ վիրավորանքի և ատելության նվազեցման և/կամ դրա խսպառ վերացման համար:

Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ հասարակական հարաբերությունները մշտապես զարգանում և փոփոխվում են, այդ ընթացքում ի հայտ են գալիս կամ ընդգծվում են որոշակի հակահասարակական արարքներ, որոնց ունեցած բարձր հանրային վտանգավորությունը պատճառ է հանդիսանում այդ արարքներն օրենսգրքում ներառելու և քրեական պատասխանատվության սպառնալիքով դրանց դեմ պայքարելու համար: Իսկ այդ արարքների սահմանման բացառիկ լիազորությունը պատկանում է օրենսդիր մարմնին, այդ հանգամանքն արձանագրել են նաև նախագծի հեղինակները:

Քննարկվող հոդվածի լրացման հիմնավորումներից պարզ է դառնում, որ օրենսգրքում նշված հանցակազմի ներառման ճանապարհով նպատակ է դրվում հասնել հասարակական համերաշխության և հանցագործությունների թվի նվազեցման: Նման հանցակազմի անհրաժեշտության մասին է վկայում նաև եվրոպական մի շարք երկրներում վիրավորանքի քրեականացված լինելու և այդ հոդվածով բազմաթիվ քրեական գործերի առկայության մասին առկա ուսումնասիրությունները:

Ինչ վերաբերում է քննարկվող նախագծի հիմնավորումներին, պետք է նշել, որ դրանց մեծ մասում խոսվում է զրպարտության քրեականացման անթույլատրելիության մասին, մինչդեռ, առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ծանր վիրավորանքի հանցակազմ պարունակող հոդվածը: Այդպիսին է իրավիճակը նաև նախագծի հեղինակների կողմից ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 29-ին ընդունված մեկնաբանությունների վերլուծության դեպքում, որում նախագծի հեղինակների կողմից շեշտվում է անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող կամ զրպարտող տեղեկությունների հրապարակման դեպքում քրեական պատասխանատվության բացառման անհրաժեշտությունը, որպես հիմնավորում բերվում է ծանր վիրավորանքի քրեականացման դեմ: Սակայն, միանշանակ է, որ ծանր վիրավորանք և զրպարտություն տերմիններն ունեն բովանդակային տարբերություններ:

Անդրադառնալով այն պնդմանը, որ նույն արարքի համար նախատեսված է քրեական և քաղաքացիական պատասխանատվություն՝ պետք է նշել, որ ի տարբերություն քաղաքացիական օրենսգրքի, որը պատասխանատվություն է սահմանում անձին վիրավորելու համար, քրեական օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում ծանր վիրավորանքի համար: Ծանր վիրավորանքի դեպքում անձի անձնական արժանապատվությանն առավել մեծ վնաս է հասցվում, քան վիրավորանքի դեպքում, որի հետևանքով էլ առաջանում են տարբեր իրավական հետևանքներ: Պետք է նաև հիմք

ընդունել այն, որ «վիրավորանք» և «ծանր վիրավորանք» հասկացությունները գնահատողական են, և ամեն կոնկրետ դեպքում դրանցից մեկի առկայության մասին եզրահանգելիս պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ վիրավորանքի բնույթը, այն անձն ում ուղղված է եղել վիրավորանքը, վիրավորանք հասցնելու հանգամանքները և այլն:

Վերոգրյալի լույսի ներքո պետք է արձանագրել, որ ազատ արտահայտվելու իրավունքին քննարկվող հանցակազմով նախատեսվող միջամտությունը համապատասխանում է ՄԻԵԴ նախադեպային դիրքորոշումներին, քանի որ նախատեսված է օրենքով, հետապնդում է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հասարակական և մասնավոր շահերի հավասարակշռման համար:

Անդրադառնալով քննարկվող հոդվածի անհամապատասխանությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ պետք է նշել, որ դրա 42-րդ հոդվածի 3-րդ մասը թույլատրելի է համարում կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումը՝ միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Վերոգրյալից զատ, պետք է նկատի ունենալ նաև այն, որ հատկապես քրեական օրենքին բնորոշ պետք է լինի կայունությունը՝ հաշվի առնելով վերջինիս կարգավորման առարկայի առանձնահատկություններն ու նշանակությունը: Ուստի, այս տեսանկյունից ևս արդարացված չի կարող համարվել վերը նշված հիմնավորումների հաշվառմամբ իրավաչափ և համաչափ սահմանափակում նախատեսող հանցակազմի ապաքրեականացումն ընդամենը երեք ամիս առաջ քրեականացնելու պայմաններում:

2. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը ևս նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները:

Ամփոփելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծերով քննարկվող գործող օրենսգրքերի հոդվածները թողնել անփոփոխ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

N 1240 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐՎԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՔԵՎՈՒՅՈՐ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Մ Ի Ն**

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Քրիստիննա Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (Խ-065-12.10.2021-ՊԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ**

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.11.2021
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱԳՐԻ
ԱՏՐԱԳՐՈՒԹՅԱՆ

Խ-065-12.10.2021-ՊԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 137.1 հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Խ-065-12.10.2021-ՊԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-րդ մասից հանել «137.1-ին հոդվածի 1-ին մասով» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածը, որն օրենսգրքում լրացվել է սույն թվականի հուլիսի 30-ի ՀՕ-323-Ն օրենքով, լուրջ հակասություններ ունի թե՛ Սահմանադրության, թե՛ Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի հետ:

Այդ հոդվածում սահմանված կարգավորումները թե՛ հանցակազմի նկարագրության, թե՛ պատժաչափերի տեսանկյունից վկայում են այն մասին, որ օրենսդիրը չի հետապնդել Սահմանադրությամբ սահմանված որևէ նպատակ, այլ մտադրված է եղել քրեաիրավական միջոցների և ընթացակարգերի գործադրման սպաննալիքով սահմանափակել ազատ խոսքը, հրապարակային քննադատությունը հասկապես հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, քաղաքական գործիչների նկատմամբ՝ ոչ իրավաչափ կերպով սահմանափակելով խոսքի ազատությունը:

Բացի այդ, հոդվածում օգտագործվում են եզրույթներ, որոնք անորոշ են և թույլ չեն տալիս հասցեատերերին համապատասխանեցնել իրենց վարքագիծն այդ պահանջներին:

2. Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրական դատարանն անդրադարձել է կարծիքի ազատության սահմանափակման հիմքերին՝ արժանապատվության, պատվի և բարի համբավի պաշտպանության նկատառումներով: Իր ՄԴՈ-997 որոշման մեջ նա մի շարք իրավական դիրքորոշումներ է հայտնել, որոնք մինչ այժմ կանխորոշել են և պետք է հետազայում էլ կանխորոշեն վիրավորանքին վերաբերող իրավական կարգավորումների բովանդակությունը: Սահմանադրական դատարանը,

վկայակոչելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, մասնավորապես, նշել է հետևյալը.

«...մարդու արժանապատվությունից՝ ներառյալ պատիվը, բարի համբավը և մասնավոր կյանքը, բխող իրավունքները և ազատությունները, որպես բացարձակ իրավունք գործնականում կարող են արդարացնել արտահայտվելու ազատության սահմանափակումը միայն իրավաչափ շրջանակներում: Այդ մտտեցումն է դրված նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10.2-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 17 և 19.3-րդ, Մարդու իրավունքների հանդիմանուր հռչակագրի 12-րդ հոդվածների հիմքում: (...)

Միաժամանակ, քննության առարկա դարձնելով վերոհիշյալ ազատությունների և օրենքով պաշտպանվող այլ շահերի միջև հավասարակշռության խնդիրը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ ազատությունները միշտ պետք է գերակայեն այն դեպքում, երբ տեղեկատվության բացահայտումն անհիմն չի եղել, հետապնդել է իրավաչափ նպատակ և տվյալ տեղեկատվությունը վերաբերում է հասարակական հետաքրքրություն ներկայացնող պետական գործերի և անձանց:

(...) 22. Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասի¹ նորմատիվ պահանջից բխող պաշտպանության իրավունքն անվերապահ կիրառելի է բոլոր, այդ թվում հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ, այնուամենայնիվ, այդ անձինք, ինչպես նաև ՀՀ դատարանները պետք է ընդունեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց անձնական իրավունքներն օրյեկտիվորեն ենթարկվում են խախտվելու ավելի մեծ ռիսկի, քան մասնավոր անձանց իրավունքները: Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը նվազ սահմանափակումներ է նախատեսում քաղաքական խոսքի և հանրային հետաքրքրության հարցերի շուրջ քանակեճի ստնչությամբ: Հասարակական և քաղաքական (հանրային) գործիչների դեմ ուղղված քննադատության սահմաններն առավել լայն են, քան մասնավոր անձանց դեպքում: Ի

¹ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրություն:

տարբերություն վերջինների՝ հասարակական և քաղաքական գործիչների գործունեությունն ավելի հրապարակային է, ուստի ավելի մեծ հանդուրժողականություն է պահանջում: Դա բխում է նաև ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածների սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունից, քանի որ ժողովրդաիշխանությունն իրականացվում է նաև հանրային ծառայության միջոցով, և այդ ծառայությունը կրող անձանց հանրային և մասնավոր վարքագիծն օբյեկտիվորեն կարող է հասարակական քննարկման առարկա դառնալ:

Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է *ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից...*:

(...) Հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից...

(ՄԴՈ-997, 15 նոյեմբերի, 2011 թ.):

Հարկ է նշել նաև, որ ՄԴՈ-947, 5 ապրիլի, 2011 թ. Որոշմամբ նշվել է, որ«... Ընդ որում, այս կամ այն արարքի հանրային վստահավորության գնահատումը և դրա քրեականացումը գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասությունների տիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը և էլնելով վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության հստակ տարանջատման ու համադրված կանոնակարգման անհրաժեշտությունից», մինչդեռ վիրավորակցի քրեականացում նախատես նորմի և քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածների միաժամանակյա առկայության դեպքում բացակայում է հստակ տարանջատման հնարավորությունը:

Բացի այդ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից 2011թ. հուլիսի 11-29-ին ժնկում ընդունված թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունը, «ARTICLE 19» կազմակերպության կողմից մշակված մոտեցումները և այլն) վերլուծությունը

վկայում է, որ, մասնավորապես, համաձայն եվրոպական իրավական ներկա զարգացումների՝

- մամուլի դեմ անձի պատվի և արժանապատվության պաշտպանության նպատակով հարուցված հայցերի դեպքում անկա է արտահայտվելու ազատության իրավունքի և անձի արժանապատվության քախում, և լուծումները պետք է գտնվեն դրանց հավասարակշռման տիրույթում,

- մամուլի միջոցներով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելը համարվում է իրավախախտում, սակայն ոչ քրեորեն պատժելի արարք,

- այդ իրավախախտումը ենթադրում է համարժեք փոխհատուցում, որն անհրաժեշտ է անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը վերականգնելու համար,

- այդ փոխհատուցումը չպետք է շփոթել պատճառած գույքային վնասի հետ,

- այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես լրատվամիջոցի դեմ կիրառվող սույժ կամ սուզանք, հակառակ դեպքում կիմաստագրկվի զրպարտություն երևույթի ապացրեականացումը,

- զրպարտության վերաբերյալ գործերով պատասխանողը պետք է կրի միայն իր հրապարակած փաստերի ճշմարտացիության ապացուցման պարտականությունը,

- պետք է ապահովվի ու երաշխավորվի «ողջամիտ հրապարակման» պաշտպանությունը,

- հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում հանրությանը հուզող խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու հարցում մամուլի արանցքային դերը՝ առավել լայն պաշտպանություն պետք է ապահովվի այն հրապարակումների համար, որոնք մաս են կազմում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ ծավալվող բանավեճի:

Փսնում ենք, որ Քրեական օրենսգրքում լրացված 137.1-ին հոդվածը խախտում է Մահմանադրությունը և Մահմանադրական դատարանի հիշատակված որոշման պահանջները:

Նախ՝ վիրավորանքի քրեականացումը որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում, քանի որ գործող Քաղաքացիական օրենսգրքով արդեն իսկ սահմանված է քաղաքացիավիրավական պատասխանատվություն, ընդ որում՝ այդ պատասխանատվության չափերը հիմնականում էապես ավելի բարձր են կամ համարելի են քրեական օրենքով նախատեսված չափերի հետ, սակայն դատարանին հնարավորություն են տալիս ավելի լայն գնահատողական հայեցողության սահմաններում կիրառել դրանք՝ հաշվի առնելով կոնկրետ գործի բոլոր հանգամանքները: Բացառությամբ մեկ դեպքի, երբ քրեական օրենքով սահմանվում է կալանքի տեսքով պատժատեսակ, մնացյալ դեպքերում բոլոր պատժաչափերը սուղանքի տեսքով են:

Մեզ համար պարզ է, որ Քաղաքացիական օրենսգրքում անկա կարգավորումների անկայությամբ, հաշվի առնելով նաև վիրավորանքի համար քաղաքացիավիրավական պատասխանատվության չափերի կտրուկ ավելացման վերաբերյալ սույն թվականի մարտի 24-ին արդեն իսկ ընդունված օրենքը, որի սահմանադրականությունը հաստատվել է Սահմանադրական դատարանի կողմից, վիրավորանքի քրեականացումը որևէ սահմանադրական նպատակ չէր կարող հետապնդել, այլ ուղղված էր զուտ ազատ խոսքի դեմ և իրականում հետապնդում էր իշխանության ներկայացուցիչների հանդեպ հրապարակային սուր քննադատությունը քրեավիրավական հարկադրանքի կիրառման սպանալիքով զսպելու նպատակ: Հետևաբար՝ վիրավորանքի քրեականացումը հակասահմանադրական է:

Այս մասին է վնայում նաև հեղինակավոր «Freedom House» իրավապաշտպան կազմակերպության զեկույցը, որում խոսք է գնում հենց օրենքի հակասահմանադրականության մասին: Այդ կազմակերպությունը հայտարարել է, որ լուրջ հետքնթաց կա Հայաստանում՝ խոսքի ազատության առումով: «Freedom House» կազմակերպությունն իր զեկույցում 22 իշխանություններին կոչ է արել *անհապաղ դադարեցնել զրպարտությունը քրեականացնող հակասահմանադրական օրենքի կիրառումը*, և նշում է, որ Հայաստանում ժողովրդավարական նորմերից հետքնթաց կա:

3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում ընդգծել է, որ առանց խոսքի ազատության, ժողովրդավարության մասին խոսք չի կարող գնալ:

Ինչպես վերը նշվել է, ՄԻԵԴ-ը նշում է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանությունը վերաբերում է ոչ միայն այնպիսի կարծիքների, որոնք խնդրահարույց չեն, այլև հենց այնպիսի կարծիքների, որոնք վիրավորում են, ցնցում են կամ անհանգստացնում են պետությանը կամ քնակչության մի մասին²:

Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով ՄԻԵԴ-ը գնահատել է լրագրողին դատապարտելու հանգամանքը, որը քաղաքական գործիչներից մեկի վարքագիծը որպես «անբարոյական», «արժանապատվությունից զուրկ» և «ծայրահեղ հարմարվորական» էր անվանել: ՄԻԵԴ-ը դա գնահատել է որպես Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում, քանի որ խոսքը *միանշանակ քաղաքական վարքագծի գնահատման մասին էր*:

Եվս մեկ անգամ նշենք, որ խոսքի ազատությունը վերաբերում է նաև տեղեկություններին և գաղափարներին, որոնք վիրավորական են, ցնցող և խանգարող: Քաղաքական կարծիքների արտահայտման դեպքում, ներառյալ՝ քաղաքական գործիչների նկատմամբ քննադատությունը, *խոսքի ազատության սահմանափակման՝ պետության հեռավորությունները շատ սահմանափակ են*: Դա վերաբերում է նույնիսկ դրդիչ գնահատականներին, հասկապես եթե դրանց համար անկա է որևէ հիմք:

ՄԻԵԴ-ը մի շարք դեպքերում³ հատուկ ընդգծել է, որ ազատ քննարկումներից որևէ հանրային դերակատարի անձի պաշտպանության նկատառումներով խոսքի ազատության սահմանափակման անհրաժեշտությունը *պետք է հիմնավորվի համոզիչ կերպով*:

Բիարկե, այն ժամանակ, երբ օգտագործվում են ձևակերպումներ, որոնք հետապնդում են արժանապատվությունը նսեմացնելու նպատակ՝ *առանց որևէ լուրջ հիմքի*, նման սահմանափակումները կարող են արդարացվել, սակայն դա, մեր համոզմամբ, ենթադրում է պարտադիր կարգով տարբերակիչ չափանիշների

² Handyside./GB:

³ Jerusalem./A, Feldek./SK, Monnat./CH գործերով, և այլն:

սահմանում օրենքում, որոնք, ի տարբերություն Քաղաքացիական օրենսգրքի, Քրեական օրենսգրքում առկա չեն: Անգամ անկախ վիրավորանքի քրեականացման նպատակից, որը սովոր դեպքում հակասահմանադրական է, նման պայմաններում ցանկացած սուր քննադատություն կարող է գնահատվել եթե ոչ հայեցողությամբ, ապա ծայրահեղ անպարկեշտ վիրավորանք, ընդ որում՝ տուժողի հանրային գործունեության հետ կապված՝ անկախ փաստական հիմքից կամ՝ գնահատողական դատողությունների դեպքում՝ որոշակի հիմնավորվածությունից, և a priori հանդեցնել քրեական պատասխանատվության, ինչ նպատակ որ, ըստ ամենայնի, հետապնդվել է քրեական օրենքի նման փոփոխություններով:

ՄԻԵԴ-ը բազմիցս շեշտել է, որ վիրավորանքին վերաբերող կանոնների կիրառումն այնտեղ, որտեղ իրականում նպատակը հանրային քննադատության զսպումն է, արդարացված չէ Կոնվենցիայի տեսանկյունից: Ըստ ՄԻԵԴ-ի՝ քաղաքական բննարկումների ազատությունը ժողովրդավարական հասարակության համար հիմնարար նշանակություն ունի: Դրանից հետևում է, որ *քաղաքական գործիչների նկատմամբ քննադատության սահմանների անհրաժեշտաբար ավելի լայն պետք է լինեն*, քան մասնավոր անձանց դեպքում: Բ տարբերություն մասնավոր անձանց, քաղաքական գործիչներն անխուսափելիորեն և զիտակցաբար իրենք են իրենց դնում լրագրողների և հանրության քննադատության վիճակում, հետևաբար նրանք պետք է ավելի հանդուրժող լինեն քննադատության հանդեպ: Թեև վիրավորանքից պաշտպանությունը վերաբերում է նաև քաղաքական գործիչներին, սակայն նրանց հասուկ դերը պետք է հաշվի առնվի:⁴ Բացի այդ՝ նշանակություն ունի նաև քաղաքական գործիչների վարքագիծը: Օրինակ՝ մեկ դեպքում սովորաբար վիրավորական նշանակություն ունեցող «տխմար» արտահայտությունն արձագանք էր կոնկրետ քաղաքական գործի դրդիչ վարքագծի և՝ ՄԻԵԴ-ի գնահատմամբ՝ արդարացված էր:⁵

⁴ Օր.՝ Oberschlick./ A, Thorgeirson./ IS, Gumús./TR:

⁵ Oberschlick./A:

4. Վերոգրյալի հիման վրա պնդում ենք, որ Քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածը համատեղելի չէ ոչ Սահմանադրության, ոչ էլ Կոնվենցիայի հետ:

Ի թիվս այլնի, Քրեական օրենսգրքի հիշատակված հոդվածում խոսք է գնում ոչ միայն հայիոյելու մասին, այլև «այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով անձին վիրավորելու»: «Ծայրահեղ» և «անպարկեշտ» արտահայտությունները չափազանց գնահատողական են և դրանցով ցանկացած խիստ քննադատություն, որի միջոցով հնարավոր է հայտնել անձնավորված անհամաձայնությունն որևէ քաղաքական գործչի կամ որևէ հանրային ծառայողի հետ, կարող է դիտվել որպես ծայրահեղ անպարկեշտ կամ կարող է և չդիտվել: Ընդ որում, քրեական օրենքում հաշվի չի առնվում ոչ ենթադրյալ սուժորի վարքագիծը, ոչ դատադրությունների՝ փաստական հիմք ունենալու հանգամանքը կամ զուտ գնահատողական լինելը:

Հանրային գործունեության բնորոշումը, որը տրվել է օրենքով, ամբողջովին խնդրահարույց է: Եթե՝ անտրամաբանական է հանրային գործունեություն համարել ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված ցանկացած վարքագիծ, քանի որ այն չի կարող միշտ հանրային բնույթ ունենալ, թեև իրականացվում է հանրային իրավահարաբերությունների շրջանակներում: Բացի այդ, ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված վարքագիծը և հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու հետ կապված վարքագիծը նույնական են, քանի որ հնարավոր չէ պատկերացնել իրավիճակ, երբ պաշտոնատար անձն իր պաշտոնը զբաղեցնելու հետ կապված վարքագիծ է դրսևորում՝ առանց ծառայողական պարտականությունների կատարման, մինչդեռ դրանք թվարկվում են զուգահեռաբար:

Պարզ չէ նաև, թե ինչ չափանիշներով է հասարակական գործունեության բանազավարից առանձնացվել լրագրողական և հրատարակախոսական գործունեությունը:

Ի տարբերություն Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի, որում ժամանակին՝ վիրավորանքի ապացրեականացմանը զուգահեռ՝ սահմանվել են շատ ավելի հստակ հասկացություններ և չափանիշներ՝ սկսած վիրավորանքի

բնորոշումից, քրեական օրենքում այդ ամենը թողնված է իրավակիրառողի գնահատմանը:

Այս ամենը վկայում է այն մասին, որ օրենսդրի մտն առկա է եղել չարակամություն՝ հանրային քննադատությունը վիրավորանքի բողի ներքո զսպելու նպատակով:

Էնդրահարույց է նաև քաղաքացիաիրավական և քրեական պատասխանատվության կիրառման հիմնահարցը մինևույն վիրավորանքի համար: Մի կողմից՝ անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել նույն արարքի համար, որն իր մեջ հանցակազմ է պարունակում և, դրանից բացի՝ քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկվել: Քանի որ վիրավորանքի համար քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կիրառվում է դատական կարգով, ակնհայտ է, որ դրանով կուպիտ կերպով խախտվում է նաև կրկին դատվելու արգելքի սահմանադրական սկզբունքը (Մահմանադրության 68-րդ հոդված)՝ նույն արարքի համար անձը կարող է ենթարկվել և քրեական, և քաղաքացիաիրավական պատասխանատվության:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել: Այս հարցում հապաղումը ոչ միայն էապես վտանգելու է ժողովրդավարությունը Հայաստանի Հանրապետությունում, ժողովրդավարական հաստատությունների գործունեությունը, այլև դրա կիրառումն անխուսափելիորեն հանգեցնելու է պետության պարսությանը ՄԻԵԴ-ում, ինչն էլ իր հերթին հանգեցնելու է հարկատուների հաշվին գոյացող պետական միջոցներից փոխհատուցման արամաղբմանը: